(ԽՐՈՆԻԿԱ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Վերջերս կայացաւ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի ընդհանուր ժողովը: Նստաշրջանին մասնակցում էին Ակադեմիայի իսկական անդամները, անդամ-թղթակիցները, ղեկավար աշխատողները, Ակադեմիայի ինստիտուտների դիրեկտորները, ինչպէս նաեւ ռեսպուբլիկայի մինիստրութիւնների, արդիւնաբերական ձեռնարկութիւնների, բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների եւ գիտական հիմնարկութիւնների ներկայացուցիչները:

«Հայկական ՍՍՌ Ակադեմիայի 1945 թ. գիտա-հետազօտական աշխատանքները եւ 1946 թ. հիմնական պրոբլեմները» զեկուցումով հանդէս եկաւ Հայկական ՍՍՌ Ակադեմիայի վիցէ-պրեզիդենտ Վ. Համբարձումեանը:

Զեկուցողը թուարկեց Ակադեմիայի խոշոր գիտական ու գործնական նշանակութիւն ունեցող նուաճումները:

Նախորդ տարիների հետ համեմատած գիտա-հետազօտական աշխատանքները նշանակելի չափով ուժեղացել են ֆիզիկո-մաթեմատիկական եւ տեխնիկական գիտութիւնների, ինչպէս եւ ռեսպուբլիկայի բնական ռեսուրսների ուսումնասիրութեան առաջարկում: Մի շարք խոշոր աշխատանքներ են կատարուել հասարակական գիտութիւնների գծով: Այդ աշխատանքներից երկուսը (Ակադեմիայի իսկական անդամ Ս. Մալխասեանի «Հայերէն բացատրական բառարան»ը եւ թղթակից-անդամ Բ. Պեոտրովսկու «Ուրարտուն») արժանացան բարձրագոյն պարգեւի — Ստալինեան մրցանակի:

Նոր հնգամեակի ընթացքում ռեսպուբլիկայի արդիւնաբերութեան ու գիւղատնտեսութեան հուժկու զարգացումը պահանջում է մի շարք գիտա-տեխնիկական եւ զուտ գիտական պրոբլեմների լուծում, պրոբլեմներ, որոնք պիտի դառնան ուսումնասիրութեան առարկա Ակադեմիայի ինստիտուտների կողմից:

Այս տարի յատուկ ուշադրութիւն է դարձուելու մի շարք գիտա-հետազօտական ինստիտուտների կառուցման ու սարքաւորման վրա. կառուցելու են Քիմիայի, Ֆիզիկայի, Հողագործութեան ինստիտուտներ, Աստղադիտական կայան եւ այլն:

Յատուկ ուշադրութիւն է դարձուելու Ակադեմիայի գիտնականների աւարտած աշխատութիւնների հրատարակման վրա:

Ընթացիկ տարում Ակադեմիայի ինստիտուտները պէտք է իրենց ուժերն տուելի համախմբեն այն հիմնական պրոբլեմների շուրջ, որոնք ունեն ժողովրդա-տնտեսական եւ ստեղծագործական խոշոր նշանակութիւն:

Զեկուցման շուրջ ծաւալած մտքերի փոխանակութեանը մասնակցողներ, Հայկական ՍՍՌ Ակադեմիայի իսկական անդամներ Մ. Թումանեանը, Լ. Յովհաննիսեանը, Ս. Կարապետեանը (Հայկական ՍՍՌ Արտաքին Գործերի Մինիստր) եւ ուրիշները, միահամուռ ընդգծեցին հետազօտական ինստիտուտների բոլոր ուժերի համակենտրոնացման եւ նովատորական աշխատանքներին ձեռնամուխ լինելու անհրաժեշտութիւնը, քանի որ ՍՍՌՄ եւ Հայաստանի Կառավարութիւնները հսկայական ուշադրութիւն են նուիրում Ակադեմիայի աշխատանքներին:

Ընդհանուր ժողովը հաստատեց Ակադեմիայի 1946 թ. աշխատանքների պլանը: